

ԼԵՋԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ ԱՐԴԻ ՀԱՅՆԵՐՆԻ
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

ՌԱՅԱՑՆԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

Շարահյուսական նվազագույն միավոր՝ ՇՆՄ¹.—Ամեն մի լեզու անքակ-
տելի ամբողջություն է, ու միայն ուսումնասիրման և ուսուցման նպատակով
այն առանձին մասերի կամ նոր անվանումով՝ մակարդակներ է բաժանվում:
Այլ խոսքով, լեզվական մակարդակները ամբողջական, կենդանի լեզվի ար-
հեստական մասնատման արդյունք են: Բայց և առանց այդպիսի մասնատման
անհնար է լեզվի գիտական ուսումնասիրությունը: Լեզվական մակարդակները
թեև կենդանի լեզվի իրողություններ չեն, բայց առանձնացվում են գիտական-
տրամաբանական հիմքով, ուստի նրանք լեզվաբանական պատճառաբանված
իրողություններ են: Ինչպես որ չի կարող մարդու կամ որևէ կենդանու կազ-
մախոսությունն ուսումնասիրվել առանց ամբողջական մարմինը մասերի բա-
ժանելու, այնպես էլ չի կարող ուսումնասիրվել որևէ ամբողջական լեզու առանց
մակարդակների և ապա՝ ավելի փոքր միավորների բաժանելու:

Մենք տարբերում ենք արդի դրական հայերենի հետևյալ մակարդակները.
1. (ամենաստորինը) հնչյութային, 2. ձևույթա-բառակազմական (կամ ձե-
վույթա-բառային), 3. ձևաբանական, 4. շարահյուսական: Կարելի է առանձ-
նացնել նաև՝ 5. (ամենավերինը) ոճաբանական, որը հնարավոր է միաժա-
մանակ համարել հայ դրականության ուսումնասիրման ամենաստորին մա-
կարդակը:

Մակարդակներից յուրաքանչյուրն ունի ենթամակարդակներ, որոնք իրենց
հերթին կարող են տրոհվել լինել: Ամեն մակարդակ ունի նաև իր, այսպես կոչ-
ված, նվազագույն միավորը: Շարահյուսական մակարդակում նվազագույն
միավորը գտնվում համար պետք է դիմել արտահայտվածքի լեզվաբանական
վերլուծության ընդունված եղանակին և վերլուծությունը կատարել մինչև այն
կետը, որը շարահյուսական մակարդակում վերջինն է և որից հետո իջնում ենք
ձևաբանական կամ ձևույթա-բառակազմական մակարդակ:

¹ Հոգվածում արծարծված հարցերի մի մասին հայ լեզվաբաններից տարբեր առիթներով
անդրադարձել են Ա. Այտընյանը (աջնական քերականություն աշխարհաբար կամ արդի հա-
յերեն լեզվի», Վիեննա, 1866), Մ. Արեղյանը (աշխարհաբարի շարահյուսություն», Վազար-
շապատ, 1912), Գ. Զահուկյանը («Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», Երե-
վան, 1924), Է. Աթայանը («Предмет и основные понятия структурального синтаксиса»,
Ереван, 1968), Ս. Արրահամյանը («Ժամանակակից հայերենի քերականություն», Երևան,
1969), Ս. Գյուլբուդյանը («Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում»,
Երևան, 1967) և ուրիշներ:

«Նաոս էր լինում արջը ետևի ոտների վրա, ձյուն շաղ տալիս, աշխատում դետնով տալ մարդուն»²։ Այս խոսքի մեջ վերլուծությունը կարելի է սկսել նախ ամբողջը երեք մասի բաժանելով. 1. ծառս էր լինում արջը ետևի ոտների վրա, 2. ձյուն շաղ տալիս, 3. աշխատում դետնով տալ մարդուն։ Եթե առանձնացնենք այս երեք բաղադրիչներից առաջինը, ապա այն ևս կարելի է երեք միավորի բաժանել. ա) ծառս էր լինում, բ) արջը, գ) ետևի ոտների վրա։

Այս միավորներից շարահյուսորեն վերլուծելի է միայն երրորդը, որը կարելի է նախ երկու մասի բաժանել՝ ա) ետևի, բ) ոտների վրա, ապա այս վերջինը ևս երկու մասի՝ ա) ոտների, բ) վրա։ Այստեղ հատվածի շարահյուսական վերլուծությունն ավարտվում է։ Եթե շարունակենք լեզվաբանորեն վերլուծել այն, ապա շարահյուսական մակարդակից դուրս ընկնելով կհայտնվենք ձևաբանական կամ ձևաբանական մակարդակներից մեկում։ Սրինակ՝ «թև վերլուծենք ոտների միավորը՝ ա) ոտն, բ) եր, գ) ի, կգտնվենք ձևաբանական մակարդակում։ Նույնը և այսպիսի վերլուծության դեպքում՝ ա) ետև, բ) ի կամ՝ ա) արջ, բ) ը։ Եթե վերլուծենք ծառս էր լինում-ը, ապա նախ կիջնենք ձևաբանական մակարդակ՝ ա) ծառս լինում, բ) էր։ Այս վերլուծությունը շարունակելով կհայտնվենք ձևաբանական մակարդակում, որտեղ հարադրությունը տարրալուծվում է՝ ա) ծառս, բ) լինում, և այս բաղադրիչները ևս վերլուծվում են. ա) լին, բ) ում և ա) ծառ, բ) ո (լին-ում տարրալուծումը կարող է նաև ձևաբանական դիտվել)։

Մենք ներկայացրինք տվյալ հատվածի վերլուծության մի տարբերակ, կարող են առաջարկել ուրիշ տարբերակներ, բայց բոլոր դեպքերում շարահյուսական վերլուծությունը տրված յուրաքանչյուր բառից այնպիսի գնալ չի կարող։ Ընդ որում, բառը շարահյուսական մակարդակում անվերլուծելի է մնում իր ձևաբանական կազմով, այնպես, ինչպես տրված է վերլուծվող խոսքի մեջ (վերլուծված հատվածում՝ ետևի, արջը, ծառս էր լինում, ոտների)։ Ուրեմն և շարահյուսական մակարդակում արտահայտված ֆի լեզվաբանական վերլուծության վերջին սահմանը բառն է՝ իր ձևաբանական եղած կազմով։ Սրանից է նոր լեզվաբանությունն իրավացիորեն եզրակացրել, որ շարահյուսական մակարդակի նվազագույն միավորը կամ պարզապես շարահյուսական նվազագույն միավորը բառն է³։

Այսպիսով, հայերեն արտահայտվածքի շարահյուսական լիակատար վերլուծություն նշանակում է վերլուծություն մինչև առանձին բառերը, այն է՝ մինչև բառարանային առանձին միավորներն իրենց եղած ձևաբանական կազմով։ Մեր ձևակերպության մեջ նա մեղմ շշմարտեց⁴.— այս հատվածի շարահյուսական լիակատար վերլուծությունը 7 միավոր է տալիս, այսինքն՝ բոլոր յոթ բառերը (այդ թվում մեջ-ը)։ «(1) Արծաթաշող (2) առուն, (3) առվին (4) ձայն է տալիս (5) ու (6) երգում» (S 163)—այս դեպքում շարահյուսորեն անվերլուծելի 6 միավոր կա (փակագծերում համար ստացածները)։ Հատկապես ուղում ենք նշել, որ շարահյուսորեն միշտ վերլուծելի են կապի ու նրա լրացման (խնդրի) բառակապակցությունները, ինչպես՝ աթոռի մոտ, դարակի

² Ա. Բ ա կ ու ն ց, Երկեր, Երևան, 1955, էջ 6 (այսուհետև՝ Բ)։

³ Համապատասխանաբար՝ հնչույթային մակարդակի նվազագույն միավորը հնչույթն է, ձևաբանական մակարդակին՝ ձևաբանականը, ձևաբանականին՝ ձևաբանականը (այն է՝ ձևաբանական մաքուր հիմքերը և ձևակազմիչ մասնիկները)։

⁴ Վ. Տ եր յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972, էջ 25 (այսուհետև՝ Տ)։

վեջ, որպես լեռ, դեպի տուն, ընտանիքով հանդերձ դեպքերից յուրաքանչյուրում ունենք երկու Շ ն Մ:

Շարահյուսական մակարդակը ունի ենթամակարդակներ, որոնք, ըստ երևութիւն, կարող են լինել հետևյալները. առհասարակ խոսքն առհասարակ, ապա՝ բարդ նախադասություն, հետո՝ պարզ նախադասություն, որ խոսքի նվազագույն միավորն է, այնուհետև՝ բառակապակցություն, որի նվազագույն միավորը երկու բառերի կապակցությունն է և, վերջապես, բառը՝ իր ձևաբանական տրված կազմով:

Ամեն գրավոր կամ բանավոր, մեծ կամ փոքր արտահայտված խոսք է. դա լեզուն է իր հաղորդակցման գործառնության մեջ: Պարզ նախադասությունը նույնպես խոսք է, սակայն խոսքի այնպիսի միավոր, որի վերլուծությունն ալլես բացառում է խոսքը: Ուրեմն խոսքի ամենափոքր (նվազագույն) միավորը պարզ նախադասությունն է՝ ընդարձակ խոսքի տրոհումից ստացված: Բառակապակցությունն ու բառը ինքնըստինքյան խոսք չեն, թեև որևէ բառ կամ բառակապակցություն հաղորդակցման նպատակով առանձին գործածվելով դառնում են խոսք (օրինակ, անդեմ նախադասություն):

Բառակապակցությունը կարող է բաղադրված լինել մինչև տասը, քսան և ավելի բառերից, սակայն այս ենթամակարդակում վերլուծությունը հասնում է մինչև երկու բառի կապակցությունը, ինչպես՝ Լինելով անհանգիստ բարբի տե՛ր և ունենալով ազատ ժամանակ բառակապակցություններից յուրաքանչյուրը կարելի է անընդհատ նվազեցնել, օրինակ՝ Լինելով անհանգիստ բարբի տե՛ր, ապա՝ անհանգիստ բարբի տե՛ր, հետո՝ բարբի տե՛ր: Եթե այս երկբառ կապակցությունն էլ վերլուծենք և ստանանք բարբի և տե՛ր բաղադրիչները (բառերը), այլևս բառակապակցություն չի լինի, այլ կլինեն շարահյուսական նվազագույն միավորներ: Ուրեմն երկբառ բարբի տե՛ր-ը կապակցային նվազագույն միավոր է կամ կապակցությո՞ւն, որ, սակայն, շարահյուսորեն վերլուծելի է:

Նախադասության ենթամակարդակում ունենք ավանդական նախադասութա՞յան անդամներ ըմբռնումը, որի ճշգրիտ սահմանը հայ քերականագիտության մեջ որոշված չէ: Անվիճելի է միայն, որ հայերենում նախադասության անդամը երեք արտահայտություն ունի. ա) բառ, բ) բառակապակցություն, ռ) երկրորդական նախադասություն բարդ ստորադասության կազմում: Առաջինը նույնանում է Շ ն Մ-ի հետ և շարահյուսորեն անվերլուծելի է, մյուս երկուսը շա՛ւաճյուսուորեն վերլուծելի են: Կնշանակի, ինչ կերպ էլ ըմբռնելու լինենք նախադասության անդամը, նրա երկու արտահայտությունները՝ բառակապակցությունը և երկրորդական նախադասությունը շարահյուսական մակարդակում վերլուծելի են:

Եթե Շ ն Մ-ի սահմանները պարզ են ու որոշ, ապա նախադասության անդամի սահմանների վերաբերյալ հաճախ տարբեր պատկերացումներ են դրսևորվում հայերենի շարահյուսագիտության ոլորտներում: «Այդ երեկոյան դաշտից վերադառնալիս՝ տան մոտ տեսավ Հակոյի հարսին»: Այստեղ տարբեր մոտեցումներով նախադասության անդամներ առանձնացնելու մի քանի տարբերակ է հնարավոր: Առաջին՝ 1. այդ երեկոյան դաշտից վերադառնալիս, 2. տան մոտ, 3. տեսավ, 4. Հակոյի, 5. հարսին. երկրորդ՝ 1. այդ երեկոյան, 2. դաշտից վերադառնալիս, 3. տան մոտ, 4. տեսավ, 5. Հակոյի, 6. հարսին, երրորդ՝ 1. այդ, 2. երեկոյան, 3. դաշտից, 4. վերադառնալիս, 5. տան մոտ, 6. տեսավ, 7. Հակոյի, 8. հարսին և այլն: Կամ՝ «Պարտաթուղթը կարդալուց հետո Հիբանը փա-

կուժ էր սնդուկը» (Բ 462) դեպքում նախադասության մեկ անգամ կարող է համարվել և՛ պարտությունը կարգալուց հետո-ն, և՛ միայն կարգալուց հետո-ն: «Գլխավոր դռնից մտնողը սլտի անցներ աջ ու ձախ ընկած շինությունների միջով» (Բ 461) օրինակում նախադասության մեկ անգամ կարող է դիտվել և՛ գլխավոր դռնից մտնողը, և միայն՝ մտնողը և աջ ու ձախ շինություններին միջով-ը, և սոսկ շինությունների միջով-ը: Մի օրինակ ևս. «Հիբանն էր կառուցել հրկրորդ հարկը՝ սրբատաշ քարերից, նեղլիկ ու փոքր պատուհաններով» (Բ 461): Նախադասության մեկ անգամ կդիտվի երկրորդ հարկը, մի ուրիշը այս նույնը կհամարի երկու անգամ, այդպես նաև՝ սրբատաշ քարերից-ի դեպքում, իսկ նեղլիկ ու փոքր պատուհաններով-ը ոմանք կհամարեն նախադասության մեկ անգամ, ուրիշները նրանում փզանաղանեն երեք անգամ և այլն:

Այսպիսի օրինակներ անվերջ կարելի է բերել, երբ նախադասության անդամներ առանձնացնելու հարցում տարբեր մոտեցումներ են հնարավոր հանդիսանում: շարժիչ շարժումների մեջ ընդունված սահմանումների պայմաններում:

Անշուշտ, վատ չի լինի, հիմա հնարավոր դառնա հայ շարահյուսագիտության մեջ նախադասության անդամի միասնական ըմբռնում մշակել, սակայն բանի որ փաստ է այդ ըմբռնման այժմյան տարրնթացությունը, կարևոր է դառնում Շ Ն Մ-ի շատ ավելի կայուն ըմբռնումը: Անկախ այն բանից, թե վերլուծողը ինչ պատկերացում ունի նախադասության անդամի սահմանների վերաբերյալ, նա խոսքը, նախադասությունը պետք է վերլուծի մինչև Շ Ն Մ-ն. այսինքն՝ մինչև բառը: Սա միասնական մոտեցում է: Վերը բերված չորս նախադասություններից յուրաքանչյուրի մեջ տեսանք, որ նախադասության անդամների քանակը որոշելու մի քանի տարբերակներ են հնարավոր, մինչդեռ նրանցից ամեն մեկում Շ Ն Մ-ների քանակը միանգամայն որոշ է՝ առաջինում (սկզբ երեկոյան...)՝ 9, երկրորդում (սկզբում թուրքերը...)՝ 6, երրորդում՝ 11, չորրորդում՝ 10:

Այս պարագային մոտեցումների տարբերություն հնարավոր է բառի ըմբռնման հարցում: Օրինակ, որոշ լեզվաբաններ բառ են համարում, այսպես կոչված, կայուն բառակապակցությունները, որոնք, սակայն, շարահյուսական մակարդակում վերլուծելի են: Մեր պատկերացմամբ բառի չափանիշը շարահյուսական մակարդակում անվերլուծելի լինելն է: Օրինակ՝ Երևանի պետական համալսարան, բարձր լավագույն դասակարգում, Հովհաննես Թումանյան, հեռուստի մայր և այլն շարահյուսորեն վերլուծելի են, կնշանակի նրանք բառեր չեն, մինչդեռ դեղաբույս, հորեղբայր, վրա տվեմք, տակ, մեջ, համար, գլուխ բերեց, ծառ էր լինում, ձեռք տալ, հանկարծակիի եկավ, վերաբերվել, գնում եմ, կարգացել եմ և այլն շարահյուսական մակարդակում անվերլուծելի են, կնշանակի մեկական բառեր են՝ Շ Ն Մ:

Երկվակարգայնություն. — Լեզվի մակարդակների ճիշտ առանձնացումը, ստույգ տարրորոշումը հստակ է պահում ուսումնասիրողի կամ սովոր-

5 Այդ դեպքում կարևոր է տարբերել նախադասության անգամ և բառակապակցության անգամ ըմբռնումները: Վերջինից եկած երկուստեքը գլխավոր կանգնել էր լուսամտի մոտ դեպքում Գլուխից եկած, լուսամտի մոտ բառակապակցությունները նախադասության անդամներ են, իսկ Գլուխից-ը և եկած-ը կամ լուսամտի-ն և մոտ-ը՝ բառակապակցության անդամներ:

րողի միտքը, զերծ շփոթություններից: Մակարդականների անհստակ պատկերացումը քերականական ոչ ճիշտ նկարագրությունների ու շփոթի դռներ է բացում: Բայց և սրա հետ միասին անհրաժեշտ է նկատի առնել երկմակարդականությունը. այն, որ կան լեզվական միավորներ, որոնք միաժամանակ երկու մակարդակների արտահայտություն են, Այդպիսին է, օրինակ՝ արդի հայերենի բայասեռի կարգը: Իշխանը սիրեց հոմոլոգիան և Հոմոլոգիան սիրվեց իշխանից—առաջին դեպքում նախադասության ներգործական կառուցվածքը և սիրել բայի ներգործական սեռը, երկրորդ դեպքում կրավորական կառուցվածքը և բայի կրավորական սեռը հակադրված են միաժամանակ և՛ ձևաբանորեն, և՛ շարահյուսորեն. ձևաբանական է սիրել բայի վ մասնիկ ունեցող և այդ մասնիկից զուրկ (զրո մասնիկ) ձևերի հակադրությունը, շարահյուսական է սիրել բայի անմասնիկ ձևի հետ նրա բայիմաստն իրագործող (կատարող) ենթակայի առկայությունը (իշխանը սիրեց=իշխանն է սիրողը), իսկ նույն բայի վ մասնիկ ունեցող ձևի հետ այդ բայիմաստը չիրագործող (չկատարող) ենթակայի առկայությունը (հոմոլոգիան սիրվեց=հոմոլոգիան չէ սիրողը): Առանց այս ձևաբանական և շարահյուսական հատկանիշների միաժամանակյա առկայության արդի հայերենում չկա բայի սեռ: Սա բերեցինք իբրև երկմակարդակայնության նմուշ:

Դիմավոր բայը շարահյուսական միավոր.—Արդի հայերենում երկմակարդակային՝ և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական միավոր է նաև դիմավոր բայը կամ պարզապես բայը: Նախքան այս իրողությունը մանրամասնելը, երկու խոսք բայ ու դերբայ խնդրի մասին: Հայ դասական քերականագիտությունը բայը (դիմավոր) և դերբայը (ընդունելություն) տարբեր խոսքի մասեր է ընկալել և լուրջ հիմքով: Արդի հայերենի դերբայներն են՝ անորոշ (–ել, –ալ), հարակատար կամ ածականական (–ած), ենթակայական (–ող), մակբայական (–ելիս, –ալիս) և դոյականական (–իք)⁶: Սրանց և դիմավոր բայերի միջև քերականական ընդհանրությունը ձևաբանորեն վ բայամասնիկ, շարահյուսորեն՝ ուղիղ խնդիր ստանալու հատկանիշն է: Տարբերությունն ավելի մեծ է. դիմավոր բայերն ունեն ժամանակ, դեմք, թիվ, եղանակ և սրանց արտահայտությունները (ձևերը), դերբայները՝ չունեն: Սա խոսքիմասային կարևոր տարբերություն է: Ուստի և քերականորեն հիմնավոր չէ դեմք, թիվ, ժամանակ, եղանակ ունեցող հարացուցային միավորների հետ նույն խոսքի մասը համարել այդ ամենից զուրկ բառերը: Ուրեմն հիմնավոր է բայը և դերբայը առանձին խոսքի մասեր դիտելը: Ծիշտ է, բայական մեկ բառույթի կազմում բառիմաստով միավորվում են նույնիմաստ-նույնարմատ բայ և դերբայ (օրինակ՝ գտա, գտաւ, գտանք, գտնելու եմ, գտել եմ, կգտնեմ..., նաև՝ գտնել, գտած, գտնող, գտնելիս և այլն մեկ բայական բառույթ են ընտ բառիմաստի), և ամեն բառույթի անունն է նրա անորոշ դերբայը (օրինակ՝ գտնել բայը կամ թափցնել բայը և այլն), բայց դրա հետ մեկտեղ անուրանալի է, որ քերականորեն բայը և դերբայը բոլորովին տարբեր խոսքի մասեր են:

Բայը (դիմավոր) երկմակարդակային է հետևյալ նկատառումով. ամեն մի խոնարհված միավոր, իբրև հարացույցի անդամ, և խոնարհման ամբողջ

⁶ Անկատարը (գտնում), վաղակատարը (գտնել), ապառնին (գտնելու) և ժխտմանը (գտնի) վերահիշյալ հինգից բոլորովին տարբեր միավորներ են և շարահյուսական մակարդակում բառի (Շ ն Ս-ի) արժեք չունեն, միայն եմ բայի միացությամբ են ստանում այդպիսի արժեք, ուստի դրանք դերբայ չեն, այլ եմ, ես, է...-ի հարադրական հիմքեր:

հարացույցը ձևաբանական մակարդակում են՝ գտա, գտաւ, գտաւ, գտանք, գտաք, գտանք... և այլն: Միաժամանակ հարացույցի ամեն մի անդամը առանձին առնված շարահյուսորեն մեկ պարզ նախադասություն է՝ գտա կամ կգտնեն:

Բայր իբրև ձևաբանական միավոր խոսքի մաս է, գտնվում է գոյականի, մակբայի, դերբայի, ածականի ու մյուսների առանձնացման մակարդակում, իբրև խոսքակազմիչ կամ նախադասություն, բայր շարահյուսական միավոր է և գտնվում է ենթակայի, մականունների, պարագանների, խնդիրների, ստորոգելիական վերադիրների և մյուսների տարբերակման մակարդակում:

Այս իրողությունը նկատի առնելով հաղթահարվում են շարահյուսական վերլուծության և ուսուցման մի շարք դժվարություններ: Դիտենք դրանցից երկուսը:

1. Բաղադրյալ ստորոգյալի վերլուծությունը: Մեր համոզմամբ արդի հայերենի նյութը հնարավորություն չի ընձեռում բայական և անվանական ստորոգյալների առանձնացման և հակադրման համար: Ուստի, հայերենում լեզվական հիմք չունի նաև բայական պարզ, բարդ ու բաղադրյալ, անվանական պարզ, բարդ և բաղադրյալ ստորոգյալների առանձնացումը: Քերականական այդ կաղապարները որոշ հայ լեզվաբաններ վերջին տասնամյակներում վերցրել են ուսանողների քերականության գրքերից և ջանացել դրանց հարմարեցնել հայերենի լեզվական նյութը: Ռուսերենը իրոք հիմք տալիս է բայական և անվանական ստորոգյալների տարբերակման, օրինակ՝ Мой отец родился в Ереване դեպքում родился բայական ստորոգյալ է, այսինքն բայ է (դիմավոր), մինչդեռ Мой отец машинист նախադասության մեջ машинист անվանական ստորոգյալ է, այսինքն՝ անուն, գոյական (և արդի ուսանողների մտածողությամբ բայի որևէ զեղչում չկա): Հայերենում երկու դեպքում էլ ուսանողներն նույնանիշ ստորոգյալները բայական արտահայտություն ունեն, մի դեպքում՝ լրիվ, մյուս դեպքում՝ մասնավոր: Հայրս ծնվել է Երևանում և Հայրս մեմենավար է: Եթե հայերենում հնարավոր լիներ կազմել Հայրս մեմենավար խոսքը, իբրև կանոնավոր նախադասություն՝ հոմանիշ Мой отец машинист խոսքին, հայոց լեզվում էլ կունենայինք անվանական ստորոգյալ: Բայց դա բացառվում է: Այն, ինչ այսօր քերականագիտության մեջ հասկացվում է ստորոգյալ անվանման տակ արդի հայերենում միշտ բայական է լինում՝ կամ միայն բայ է (դիմավոր), երբեմն զեղչված, կամ բայ (դիմավոր) ունի իր կազմում, այսինքն՝ բայի և այլ բառերի կապակցություն է: Այնպես, ինչպես գերմաներենում է, անգլերենում, ֆրանսերենում:

Ահա հայերենում միայն մեկ դիմավոր բայով արտահայտվածը պարզ ստորոգյալ է, որ նշանակում է, թե շարահյուսորեն բաղադրված չէ, անվերլուծելի է՝ Շ Ն Մ է, ինչպես՝ գտա, գտնելու եմ կամ կխաղամ, խաղացել եմ և այլն: Իբրև բառակապակցություն արտահայտվող ստորոգյալը բաղադրված է շարահյուսական մակարդակում և բաղկացած է երկու կամ ավելի Շ Ն Մ-երից, ուստի վերլուծելի է շարահյուսական մակարդակում: Օրինակ, «Մտրակը դառնում է սև օձ» (Բ 107) դեպքում ստորոգյալ է դառնում է սև օձ-ը, որ շարահյուսական բաղադրություն է, վերլուծելի շարահյուսական մակարդակում: Գերադաս անդամն է դառնում է բայը, որի լրացումն է սև օձ բառակապակցությունը (որոշիչ—որոշյալ): Կամ՝ վերոհիշյալ Հայրս մեմենավար է դեպքում՝

մեքենավար է շարահյուսական բաղադրություն է՝ է-ն՝ դերադաս, նրա լրացումը՝ մեքենավար:

Այսպիսի շարահյուսական բաղադրություններ կազմվում են նաև ճոշակել, լինել, դարձնել, համարել, երևալ, նստել, թվալ, անվանել, կոչել և շատ ուրիշ բայերով: Անճիշտ բնութագրմամբ այս բայերն անվանված են վերացական՝ իրր սեփական բովանդակությունից զուրկ, որ միայն հատկանիշ են վերագրում Լնթական: Բայց արդյո՞ք երևաց, անվանեցինք, ճոշակեց և այլն կամ նույնիսկ դարձա, դարձավ իրոք վերացական են: Ո՞չ, անշուշտ: Նրանցից յուրաքանչյուրն իր իմաստն ունի, երբեմն մեկից ավելի, որոնք և բացատրվում են բառարաններում: Այս բայերը խոսքի մեջ ենթակային վերագրում են և՛ իրենց իմաստը, և՛ ստորոգելիական վերագրին: Խավարում ծառը զննալետին սարսավելի ճրեշ թվաց դեպքում թվաց բայը ծառը ենթակային վերագրում է և՛ իր, և՛ սարսավելի ճրեշ բառակապակցության (ստորոգելիական վերագիր) իմաստները, ու երկուսը միասին կազմում են ենթակայի տվյալ հատկանիշը (սարսավելի ճրեշ թվալու):

Վերապահությամբ վերացական կարող է անվանվել միայն եմ բայը, որ և շարահյուսական կիրառության մեջ կարող է կոչվել հանգույց: Տան աերը աղջիկ է դեպքում աղջիկ է բաղադրյալ ստորոգյալի կազմում է-ն հանգույց է, այսինքն՝ միավոր, որի դերը աղջիկ գոյականի արտահայտած բովանդակության վերագրումն է ենթակային: Հանգույցը ըմբռնումը առնչված է վերացական բայ հասկացության հետ: Իսկ շարահյուսական մակարդակում ինչ անուն տանք կոչվեց, կերևա, թվաց և ուրիշ ոչ վերացական, այլ լիովին իմաստային բայերին, որոնք հանդես են գալիս բաղադրյալ ստորոգյալի կազմում: Հանգույց անունը այս դեպքում սխալ կլինի:

Վերցնենք դառնալ բայով բաղադրված մի այլ ստորոգյալ-բառակապակցություն: Ընկեր Կուրախանը մեզ համար դարձել էր ինչ-որ անճայտ, ճեփաթային աշխարհից եկած անսովոր առաջյալ: Այս նախադասության ստորոգյալի սահմանները որոշելու խնդրում պատկերացումների տարբերակներ են հնարավոր, ինչպես վերոհիշյալ մի շարք այլ նախադասության անդամների դեպքերում էր: Ումանք ստորոգյալ կհամարեն դարձել էր առաջյալ-ը, ուրիշները՝ ամբողջ կապակցությունը՝ դարձել էր ինչ-որ անճայտ, ճեփաթային աշխարհից եկած անսովոր առաջյալ: Երկու դեպքում էլ անառարկելին այն է, որ ունենք շարահյուսական մակարդակում վերլուծելի կապակցություն՝ դարձել էր գերադաս անդամով: Նրա անմիջական լրացումն է առաջյալ-ը, որի լրացումները կամ լրացումների լրացումներն են ինչ-որ, անճայտ, ճեփաթային, աշխարհից և այլն՝ որոշիչներ, կողմնակի տեղի պարագա և այլն: Իսկ ի՞նչ շարահյուսական միավոր է դարձել էր-ը, որ հանգույց չէ: Այստեղ օգնության է դալիս բայի (դիմավոր) երկմակարդակային բնույթի ըմբռնումը: Դարձել էր-ը շարահյուսորեն էլ բայ է (բայ իբրև շարահյուսական միավոր), ինչպես որ նախորդ օրինակում շարահյուսորեն բայ է թվաց-ը:

2. Անենթակա նախադասության գերադաս անդամը: Շարահյուսորեն ի՞նչ է կամ ինչպե՞ս պետք է անվանել անենթակա նախադասության գերադաս անդամը: օրինակ՝ Վարդապետյանին կանչեցին ուսուցչանոցից, Այս ձորերում շատ շուտ է մթնում, Արյունը արյունով չեն լվանա նախադասություններում չկա ենթակա և նրանց բովանդակությունն այնպիսին է, որ ենթակայի կարիք էլ չկա և հնարավոր չէ վերականգնել (առանց բովանդակության աղճատման):

Ստորոգյալի համընդհանուր սահմանումն է. «Ստորոգյալը նախադասութիւնն ալն անդամն է, որը հատկանիշ է վերագրում ենթակային» կամ՝ «Ստորոգյալը ցույց է տալիս, թե ինչ է անում, ինչ է լինում կամ ինչ է ենթական»⁷։ Ստորոգյալն ուրիշ սահմանում չունի, մյուսները վերը բերվածների տարբերակներն են⁸։ Իսկող դեպքերում ստորոգյալ անվանվում է մի միավոր, որի առկայությունը առնչված է ենթակայի գոյության հետ։ Այսինքն՝ ըստ համընդհանուր սահմանման առանց ենթակայի չկա ստորոգյալ (եթե չկա այն, ինչին վերագրվում է հատկանիշ կամ այն, ինչ մի բան է անում, ուստի չի կարող լինել վերագրողը և մի բան անել ցույց տվողը)։

Ըստ ստորոգյալի ցանկացած սահմանման այն նախադասություններում, ուր չկա ենթակա, չի կարող լինել և ստորոգյալ։ Ուրեմն և անենթակա նախադասություններում չկա ու չի կարող լինել ստորոգյալ (անենթակա նախադասություններում ինքնաստորոգման կամ «թաքնված ենթակայի» մասին մտածելը քերականական հիմք չունի, քանի որ չունի քերականական որևէ արտահայտություն), ինչպես որ ենթակա չկա անդամ նախադասությունների մեջ (օրինակ՝ Սրբազան երազ կամ Կարոտալի՝ ժամ նախադասություններում երազ և ժամ գերադաս անդամները ենթականեր չեն)։

Արդ, վերը բերված նախադասություններում ի՞նչ են կանչեցին, մթնում է, չեն լվանա միավորները, եթե նրանք ստորոգյալ չեն և չեն կարող լինել։ Դարձյալ օգնության է դալիս բայի (դիմավոր) երկմակարդակայնության ըմբռնումը։ Վերոհիշյալները շարահյուսորեն էլ բայ են։ Իհարկե, կարող են նրանք պարզապես կոչվել անենթակա նախադասության գերադաս անդամ, բայց և նույնքան հիմնավոր է նրանց շարահյուսորեն ուղղակի անվանել բայ (կամ՝ դիմավոր բայ)։

Բայ և ստորոգյալ. — Սրանք, բնականաբար, միմյանց չեն բացառում, պարզապես հաճախ լիովին, հաճախ էլ մասամբ համընկնում են, երբեմն տարբերվում, երբեմն էլ բացակայում են նախադասության մեջ։ Պարզ ստորոգյալը միաժամանակ դիմավոր բայ է։ Բաղադրյալ ստորոգյալն իր կազմում ունի դիմավոր բայ (որպես գերադաս անդամ)։ Անենթակա նախադասությունների մեջ գերադաս անդամը դիմավոր բայն է, և չկա ստորոգյալ։ Անդամ նախադասությունների մեջ չկա ո՛չ ստորոգյալ, ո՛չ դիմավոր բայ։

Արդի հայերենում նախադասության երկու գլխավոր տեսակները. — նախադասությունների բաժանումը երկկազմ և միակազմ խմբերի նույնպես չի բխում արդի հայերենի շարահյուսական նյութից, այլ գալիս է ուրիշ լեզուներից։ Իրականում արդի հայերենի նախադասությունները երկու այլ տեսակի են՝ դիմավոր և անդամ։ Դիմավոր են այն նախադասությունները, որոնց կազմում կա դիմավոր բայ։ Անդամ են այն նախադասությունները, որոնց կազմում չկա դիմավոր բայ։ Դիմավոր նախադասություններն էլ լինում են՝ ստորոգելիական, որոնք ունեն ենթակա և ստորոգյալ և անենթակա, որոնք ունեն դիմավոր բայ իբրև գերադաս անդամ։

⁷ Շարահյուսական դպրոցական դասագրքի տարրեր հրատարակություններ։

⁸ Հմմտ. նորագույն մի տարբերակը. «Ստորոգյալը նախադասության այն անդամն է, որը հավասարական հարաբերությամբ, ստորոգումով հատկանիշը վերագրում է ենթակային և ունի դիմայնություն ու ժամանակայնություն» («Ժամանակակից հայոց լեզու», հ. 3, Երևան, 1976, էջ 156)։

Հայերեն խոսքում դիմավոր նախադասությունները քանակական բացարձակ գերակշռություն ունեն և նրանց շարահյուսության չգերազանցված լուսաբանմանն է նվիրված Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսությունը»-ն։ անդամ նախադասությունները չեն քննված նրանում։

Բայ-անորոշ դերբայ կապակցությունները.— Սրանք արդի հայերենին շատ հատկանշական են։ Ունենք հետևյալ կաղապարները։

1. Անորոշ դերբայը ենթակա է պետք է, անհրաժեշտ է, կարելի է ու նման բայական կապակցություններով (նաև որոշվեց բայաձևով) կազմված նախադասություններում՝ Անհրաժեշտ է մեկնել, Պետք է գնալ, Որոշվեց կառուցել և այլն։ Այս դեպքերում առկա է ենթակա-ստորոգյալ համաձայնություն հզակի թվով, երրորդ դեմքով։ Անորոշ դերբայի ենթակա լինելը պարզվում է մի բանի սեռակ փոխակերպումներով (հմմտ.՝ Մեկնելն անհրաժեշտ է, ուր հոգով դերբայի ենթակա լինելը բացահայտ է կամ Անհրաժեշտ է ուղեցույց, ուր ուղեցույց-ը գոյականով արտահայտված ենթակա է և այլն)։ Հիմք չկա այս կապակցությունները, այսպես կոչված, միասնական ստորոգյալ համարելու։ նախ ամբողջ նախադասությունը (Անհրաժեշտ է մեկնել և այլն) ստորոգյալ լինել չի կարող, քանի որ տվյալ մոտեցմամբ անենթակա է գիտվում (ուրեմն և՛ անստորոգյալ է), ապա՝ հայերենում անորոշ դերբայը գոյականական ընդգրծված հատկանիշներ ունի (հոլովում, հոգավորում) և չպետք է նույնացնել, օրինակ, ռուսերենի անորոշ դերբայի հետ, որը չունի այդ հատկությունները։ Необходимо отправиться կամ Надо идти քերականորեն շատ տարբեր են Անհրաժեշտ է մեկնել և Պետք է գնալ կաղապարներից։ Առաջիններում отпра- виться և идти, իրոք, ենթականեր չեն, վերջիններում մեկնել և գնալ անպայ- ման ենթակա են։

2. Անորոշ դերբայն ուղիղ կամ ներգործական սեռի խնդիր է Որոշեցի մեկ- նել, Սիրում եմ երգել և նման դեպքերում, երբ ունենք Մեկնելը որոշվեց (իմ կողմից), Երգելը սիրվում է (իմ կողմից) փոխակերպումները, որոնք հատուկ են ներգործական սեռի խնդրին (ուղիղ)։ Այլ դեպքերում անորոշ դերբայը փո- խարինվում է գոյական ուղիղ խնդրով (Ուզում եմ գրել, Ուզում եմ գիրք)։ Հայերենի կառուցվածքին խորթ է և անհիմն այս նախադասությունները ևս «միասնական ստորոգյալ» կամ «բարդ ստորոգյալ» համարելը։

3. Անորոշ դերբայը թեք հոլովով անուղղակի խնդիր է Պատրաստվում եմ մեկնելու, Խուսափեցի հանդիպելուց և այլ դեպքերում, երբ փոխակերպմամբ թեքված դերբայի տեղը զբաղեցնում են նույն հոլովն ունեցող անուղղակի խըն- դիր-գոյականները (Պատրաստվում եմ ղառախոսության, Խուսափեցի հանդի- պումից)։

4. Անորոշ դերբայը դիմավոր բայի լրացում է նաև Պատրաստվում եմ մեկ- նել, Խուսափեցի հանդիպել դեպքերում։ Այս կաղապարները ևս անվանված են միասնական (կամ բարդ, բաղադրյալ, շարույթային) ստորոգյալ։ Տվյալ դեպ- քում անվանումների կապակցությամբ չենք ուզում առարկել, բայց կարևոր ենք համարում նշել, որ անկախ գործածված անվանումից վերահիշյալ կա- պակցությունները վերլուծելի են շարահյուսական մակարդակում, ուստի հիշ- յալ անուններից որևէ մեկով նրանց կնքելուց հետո դեռ պետք է որոշել ինչ կապակցություն է և անորոշ դերբայն ինչ անդամ է։ Մեր համոզմամբ ունենք բայի և անուղղակի խնդրի հարաբերություն (անորոշ դերբայը չունի ուղիղ կամ ներգործական սեռի խնդրի հատկանիշներ, ուստի անուղղակի խնդիր է)։ Հնա-

րավոր են անվանման այլ առաջարկներ, բայց անտարակույս է, որ Պատրաստվում եմ սեկենել-ը կամ Վախենում եմ նայել-ը շարահյուսական մակարդակի կապակցություններ են և պետք է վերլուծվեն. վերլուծման դեպքում էլ պարզ է դառնում, որ կապակցությունը ստորադասական է, ուստի անորոշ դերբայը դիմավոր բառի լրացում է: Այլ լուծում հնարավոր չէ: Մնում է լրացումը հաջող անվանել, քանի որ հայ քերականագիտության մեջ անսովոր է (թեև հիմնավոր) անուղղակի խնդիր ուղղական հոլովով ըմբռնումը, ուստի, թերևս, հնարավոր լինի գործածել անորոշ խնդիր անվանումը:

Բայի լրացումներն են. ա) սեռի խնդիրներ (ներգործական սեռի = ուղիղ խնդիր և կրավորական սեռի = ենթադրական), բ) բնության կամ անուղղակի խնդիրներ (նաև անորոշ խնդիր), գ) ստորոգելիական վերադիր, դ) պարագաներ, ե) ենթակա: Երբ դիմավոր կապակցության մեջ բայը փոխարինում ենք դերբայով (դերբայական փոխակերպում), վերոհիշյալ միավորները մնում են լրացում. օրինակ՝ «Երբ նկատեցի հոգս» — «Հոգս նկատելու պահին» (ուղիղ խնդիր), «Երբ մոտենում էի տանը» — «Տանը մոտենալու պահին» (անուղղակի խնդիր), «Երբ նա հայր էր դառնում» — «Նրա հայր դառնալու ժամանակ» (ստորոգելիական վերադիր), «Երբ տուն էի վերադառնում» — «Տուն վերադառնալիս» (պարագա), «Երբ հայրս ժամանեց» — «Հոգս ժամանելու պահին» (ենթակա): Այս հինգ բնույթի միավորներն արտահայտվում են նաև ստորադասական նախադասություններով և դարձյալ բայի լրացումներ են լինում: Միայն ենթակայի մի օրինակ. «Պարզվեց, որ նա նախկին գորավար է». նա նախկին գորավար է, ստորադաս նախադասությամբ արտահայտված ենթական. պարզվեց, բայի լրացումն է:

ГРАНИЦА ЛИНГВИСТИЧЕСКОГО АНАЛИЗА НА СИНТАКСИЧЕСКОМ УРОВНЕ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

РАФАЭЛЬ ИШХАНЯН

Резюме

Определение предела лингвистического анализа на синтаксическом уровне современного армянского языка выявляет минимальную (элементарную) синтаксическую единицу, каковой для армянского языка является отдельное слово, в его данном грамматическом оформлении. Примеры разбора некоторых конструкций свидетельствуют о том, что в армянской грамматической литературе понятие член предложения уточнено недостаточно, и целесообразно при анализах ориентироваться на более конкретное понятие — *минимальная синтаксическая единица*. При помощи синтаксического разбора текстов можно определить личный глагол армянского языка как единицу одновременно морфологического и синтаксического уровней. Правильно ранее высказанное мнение М. Абеяна и других исследователей о том, что личный глагол является центральным членом в конструкциях личных предложений армянского языка. Особое внимание следует уделять вопросу о неармянских синтаксических моделях, применение которых делает неправильным описание ряда грамматических явлений современного армянского языка.